

# ՀԻՄՆ, ԹԵ՛ ԼՈՐ ՀԱՅԵՐ...

Posted on February 25, 2019 by Keghart



Category: [Opinions](#)



## **ՊԿԱ. Հրայր Ծեպեճեան, Նիկոսիա, 17 Փետրուար 2019**

Կեդրոնական Եւրոպայի հայկական ներկայութիւնը ունի իւրայատկութիւններ: Հայկական սփիւռքը այս երկիրներու մէջ կազմաւորուած է միջին դարերէն սկսեալ: Այս իմաստով հայկական իրականութիւնը այս շրջաններուն մէջ եղած է «հին», իսկ «նոր»-ը՝ Ցեղասպանութենէ ետք ճողոպրած հայորդիներ, որոնք հասած են այս շրջանները: Իսկ վերջին տասնամեակներուն ասոնց վրայ կու գան անելնալու Հայաստանէն ժամանած հայերը: Հայկական սփիւռքի ու գաղութներու կազմութիւնը կեդրոնական Եւրոպայի այս երկիրներու մէջ որակուած է որպէս հին եւ նոր հայեր:



Յունուար 2019, Պոլտափեշտ, Հունգարիա: Դարձեալ գեղեցիկ քաղաք մը՝ աշխարհի շատ մը նոյնանման մայրաքաղաքներու մէջ, որոնք կու գան ստեղծելու սքանչացումի հոգեպարար տրամադրութիւն: Պոլտափեշտի պարագային, կայ Տանիւկ գետը, որուն երկու կողմերը սփռուած են Պոլտա եւ Փեշտ քաղաքները:

## **ՊԿԱ. Հրայր Ծեպեճեան, Նիկոսիա, 17 Փետրուար 2019**

Կեդրոնական Եւրոպայի հայկական ներկայութիւնը ունի իւրայատկութիւններ: Հայկական սփիւռքը այս երկիրներու մէջ կազմաւորուած է միջին դարերէն սկսեալ: Այս իմաստով հայկական իրականութիւնը այս շրջաններուն մէջ եղած է «հին», իսկ «նոր»-ը՝ Ցեղասպանութենէ ետք ճողոպրած հայորդիներ, որոնք հասած են այս շրջանները: Իսկ վերջին տասնամեակներուն ասոնց վրայ կու գան անելնալու Հայաստանէն ժամանած հայերը: Հայկական սփիւռքի ու գաղութներու կազմութիւնը կեդրոնական Եւրոպայի այս երկիրներու մէջ որակուած է որպէս հին եւ նոր հայեր:



Յունուար 2019, Պոլտափեշտ, Հունգարիա: Դարձեալ գեղեցիկ քաղաք մը՝ աշխարհի շատ մը նոյնանման մայրաքաղաքներու մէջ, որոնք կու գան ստեղծելու սքանչացումի հոգեպարար տրամադրութիւն: Պոլտափեշտի պարագային, կայ Տանիւկ գետը, որուն երկու կողմերը սփռուած են Պոլտա եւ Փեշտ քաղաքները:

Ալեքս Աւանեսեանը ծնած է Հունգարիա: Ան, այսպէս ըսած, գաղութի «ներկայացուցիչ» դէմքն է: « Ծնողքս Ցեղասպանութենէ ետք հասած են այս երկիրը», ըսաւ Ալեքս: «Հայրս չէր գիտեր, թէ ուր ծնած է. մեծ խումբ մը որբերու հետ հասած է հոս: Իսկ մայրս Կեսարիայէն է: Հունգարիա հասած հայերը առանելաբար եղած են Կեսարիայէն», ըսաւ ան:

Հին հայերը կորսնցուցած են իրենց ինքնութիւնը եւ լեզուն: «Կը գիտակցին, որ իրենց ընտանիքին մէջ տեղ մը հայկական ինքնութիւն կայ», ըսաւ Ալեքս:

Ալեքս լաւ հայերէն կը խօսի: Ան 1969 թուականին մեկնած է Երեւան՝ իր ուսումը շարունակելու համար եւ մասնագիտացած է բեմադրութեան արուեստին մէջ: Վերադարձած է Պուտափեշտ՝ հունգարական հեռատեսիլի եւ ռատիօժամի պատասխանատու տնօրէնի հեղինակաւոր պաշտօնը: «Համայնավար վարչակարգի օրերուն միշտ ալ կը հետապնդուէի», ըսաւ Ալեքս: Իսկ հետապնդու՞մը... Ան ստանձնած էր քաղաքական լուրերու եւ անոր բաժնի սփռումի տեղակալի «գգայուն» պատասխանատուութիւնը:

Ալեքսին տունը եղած է հանդիպումներու վայր: Շատ մը հայ մտաւորականներ եւ գրողներ ու, տակաւին, արուեստագետներ, որոնք այցելութեամբ գտնուած են Հունգարիա, «անցած» են իր բնակարանէն: Ալեքսի բնակարանը «հայրենի տուն» է:  Ասոր վրայ պիտի աւելցնել, որ ան ամուսնացած է Երեւանէն Կարինէ Կարապետեանին հետ, որուն հայրը՝ Արծուիկը, եղած է «Սովետական Հայաստան» թերթի խմբագիրը:

Հունգարիան ալ անցած է համայնավար կարգավիճակէն դեպի Եւրոպական միութիւն: Եւ այս իմաստով, 1994-1995 տարիներուն ստեղծուեցան եւ վաւերացուեցան տասներեք համայնքային փոքրամասնութիւններ՝ պետական ճանաչումով, ներառեալ հայկականը: Եւ Ալեքս Աւանեսեանը եղած է «մղիչ ուժը» այս փոքրամասնութիւնները հիմնելու մէջ:

Ալեքսին կեանքը «դադար» չէ տեսած մինչեւ այսօր: «1998 թուականին հիմը դրինք հայկական ռատիօժամին», ըսաւ ան: «Մեզի շնորհեցին շաբաթական կես ժամ հաղորդում-յայտագիր, եւ մենք գոհ ենք այս վիճակէն»:

Սօսի Սուսանեանը կու գայ Հալէպէն: Երեւանի բանասիրական համալսարանէն վկայուելէն ետք վերադարձած է Հալէպ եւ նուիրուած՝ ուսուցչական ասպարեզին: 2003 թուականին եկած է Պուտափեշտ՝ կազմելու համար հայ ընտանիք մը՝ ամուսնանալով հալէպահայ Յարութիւն Տետեանին հետ: Սօսին ինք ստանձնած է ռատիօժամի պատասխանատուութիւնը եւ Ալեքսի ղեկավարութեան հետ հայ ձայնը կը սփռէ...

Իսկ Յարութի՞ւնը... Տասնինը տարեկանին ձգած է Հալէպը եւ մեկնած Երեւան՝ մասնագիտանալով որպէս ատամնաբուժ: Ետքը անցած է Ֆրանսա՝ ուսումը կատարելագործելու համար, որմէ ետք՝ Հունգարիա: Սփիւռքահայ կեանքի մէկ լաւ ու ապրող օրինա՞կը... Մէկ ոստանէն մի՞ւսը... Բայց այս բոլորին մէջէն եւ մինչեւ այսօր Յարութիւնը կը փնտռէ Հալէպի մէջ սորված իր հայու արժեքի կեանքը եւ անոր ջերմութիւնը: «Հոս չկայ այն ջերմութիւնը», ըսաւ ան: Եւ երեւի այդ քանի մը ժամերը, որ միասին եղանք, կարծէք գտաւ այն ջերմութիւնը, որ կը փնտռէր տարիներէ ի վեր եւ չուզէր, որ այդ ժամերը ընդհատուին...

Ու դարձեալ Ալեքսը: Այս անգամ՝ իր մարտահրաւերներով, որոնց մէջէն կ'երեւին նաեւ իր ապրած յուսախաբութիւնները...

«Գաղութին թիւը հազիւ երեք հազար հոգի կը հաշուէ», ըսաւ ան: «Դժուար կ'ըլլայ

հայերը քաջալերել, որպեսզի մասնակցին ազգային կեանքին», շարունակեց ան: Այս անգամ՝ իմ մտորումներս: Բայց արդեօք կա՞յ գաղութ, ուր դիրին կարելի ըլլայ քաջալերել հայուն խանդավառ եւ մեծ մասնակցութիւնը ազգային կեանքին մէջ...

Պոլտափեշտի մէջ կայ հայ կաթողիկէ եկեղեցի, որուն անդամները, այսպէս ըսած, հին հայերէ կը բաղկանան: Այս իմաստով ալ երեւի կորսնցուցա՞ծ է հայկական դրոշմը... «Մեզի պետք է հայկական եկեղեցի, որպեսզի գաղութը աւելի լաւ կազմակերպուի եւ համախմբուի», ըսաւ Ալեքս:

Բայց Ալեքսին «յուսախաբութիւնը» մղիչ ուժ դարձած է, որ ան անձնական մտայնացումներով եւ ջանքերով փորձէ հայը, անոր մշակոյթը եւ Յեղասպանութիւնը ծանօթացնել տեղական շրջանակներուն: Եւ մեկնելով իր պատասխանատուութիւններէն, պաշտօններէն ու պետական կապերէն՝ հիմը կրցած է դնել Հայկական մշակութային հիմնադրամին, որ մէկ կողմէ կը հրատարակէ «Արմէնիա» ամսագիրը՝ հայերէն, բայց նաեւ հայ մշակոյթին, պատմութեան եւ գրականութեան նուիրուած շատ մը հրատարակութիւններ՝ հունգարերէն լեզուով, ծանօթացնելու համար «հայ»-ը տեղական միջավայրին

Ու տակաւին: Կայ Պոլտափեշտի մէջ Հայ մշակոյթի կեդրոնը: Քաղաքի կեդրոնական մասին մէջ, մուտքին՝ եռագոյն ցցուն դրօշակով, կարծես կը մտնես պզտիկ Հայաստան...

Չապէլ Էրմոնէ-Մարթայեանը ծնած է Թրանսիլվանիա՝ Ռումանիա, որ այժմ մաս կը կազմէ Հունգարիոյ տարածքին: Հայրը հայ է, իսկ մայրը՝ ռումանացի: «Մեծ ծնողքս քաջալերեցին զիս, որ հայերէն խօսիմ», ըսաւ երիտասարդ Չապէլը, որ ստանձնած է կեդրոնի վարիչի պաշտօնը: Բայց մեծ ծնողքին քաջալերանքը բաւարար չէ եղած: Ան հետեւած է Վենետիկի Միսիթարեաններու հայագիտական դասընթացքներուն եւ սորված է հայերէն գրել- կարդալ: Չապէլը արուեստագետ հայուհին է, որ կը մշակէ ապակիի վրայ գծագրութիւն եւ մանրանկարչութիւն: «Օտարներուն եւ հունգարացիներուն կը փորձենք հայ մշակոյթը բացատրել եւ ներկայացնել», ըսաւ Չապէլ:

Չապէլը ապրող վկայութիւն մըն է այն ճշմարտութեան, որ՝ «Ուր կամք կայ, հոն կայ ելք»: Եւ եթէ ուզես, կրնաս սորվիլ քու մայրենիդ եւ ծանօթացնել քու ինքնութիւնդ շրջապատիդ:

Եւ դարձեալ Սօսին՝ «Երագային Հալեպի» աղջիկը, որուն մէջ զօրաւոր կերպով դարբնուած է մայրենին եւ ազգային ինքնութեան գիտակցութիւնը: Սօսին համար հայը արժէք է, որ կարելի չէ սակարկել... Բայց կը գիտակցի նաեւ, որ այս ասիերուն մէջ հայ զաւակ մեծցնելը բաւական դժուար առաքելութիւն է: Սօսին եւ Յարութիւնը ունին տասնհինգ տարեկան պատանի զաւակ մը՝ Նարեկ: Հունգարիա ծնած Նարեկը ունի շատ մը հարցումներ: «Բոլոր ընկերներս հունգարերէն կը խօսին, ես ինչո՞ւ հայերէն

պիտի խօսիմ», ու տակալին՝ «Ես հա՛յ եմ, թե՞ հունգարացի»:



Սօսին պահ մը փորձեց իր արցունքները «խեղդել» մեր խօսակցութեանը ընթացքին: Բայց շարունակեց՝ ըսելով. «Ես արաբերէն սորվեցայ, հիմա տղաս հունգարերէն կը սորվի: Բայց ե՞րբ հայերէն պիտի սորվինք...»:

Նայելով Սօսին եւ իր աչքերուն՝ կրցայ տեսնել հայու արմատները, որուն հիմքերը շատ խորունկ էին: Սօսին չէ յուսահատած Նարեկին հայերէն սորվեցնելէ... Եւ ան երթը կը շարունակէ...

Ալեքսը եւ Կարինէն ունին երկու երիտասարդ դուստրեր, որոնք լաւ հայերէն կը խօսին: Անոնք այսօր ամուսնացած եւ կազմած են իրենց ընտանիքները: Կարինէն ինքնավստահ եւ հաստատ է. «Ես իմ զաւակներուս հայերէն սորվեցուցի: Հիմա իրենց կարգն է սորվեցնելու հայերէնը իրենց երեխաներուն»:

Հի՛ն, թե՞ Նոր հայեր... Հունգարիա՞, թե՞ այլ... Հայր իր սփիւռքահայ գոյապայքարին մեջ ունի կարեւոր առաքելութիւն եւ երեւի պարտականութիւն...

Հայերէն սորվեցնել:

Ես, դուն եւ բոլորս:

Հին, թե՞ Նոր հայեր: Հայերէն սորվիլ եւ սորվեցնել: Հայութեամբ մեծնալ ու մեծցնել:

